«Հաստատում եմ»

Հայաստանի բանկերի միության
Գործադիր տնօրեն

Ս. Սարգսյան
18-ը հունիսի, 2021թ.

Որակավորման քննությունների անցկացման Ընթացակարգ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն ընթացակարգով սահմանվում է որակավորման քննությունների (այսուհետ՝ քննություններ) կազմակերպման և անցկացման ամբողջ գործընթացը, նաև քննությունների արդյունքների բողոքարկման գործընթացը:

1.2 Սույն ընթացակարգի կիրառումը ապահովվում է՝ «Հայաստանի Հանրապետության Ֆինանսական կազմակերպությունների ղեկավար պաշտոնների որակավորման կանոնակարգով», «Քննական հանձնաժողովի կանոնակարգով» և Միության ներքին այլ նորմատիվ իրավական ակտերով:

1.3 Սույն ընթացակարգի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Միության գործադիր մարմինը և քննական հանձնաժողովի նախագահը, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկը:

1.4 Սույն ընթացակարգը և դրանում կատարված փոփոխությունները հաստատվում են Միության գործադիր մարմնի կողմից և ուժի մեջ են մտնում հաստատման պահից:

2. Քննությունների կազմակերպումը և անցկացումը

2.1 Քննությունների կազմակերպումը ն անցկացումը (այսուհետ՝ նաև թեստավորում) իրականացվում է «Հայաստանի Հանրապետության Ֆինանսական կազմակերպությունների ղեկավար պաշտոնների որակավորման կանոնակարգով»

(այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանված կարգով:

2.2 Սահմանված կարգով քննությունների մասնակիցների (այսուհետ՝ թեկնածուներ) հերթագրումը, փաստաթղթերի ընդունումը, գրանցամատյանում (թղթային կամ էլեկտրոնային) թեկնածուների գրանցումը, հաշվետվությունների կազմումը, համակարգիչների աշխատանքային վիճակի ապահովումը, տեսաձայնագրման սերվերի գործարկումը, քննության ընթացքի հսկողությունը և թեստավորման համակարգի (ծրագրերի) (այսուհետ՝ Համակարգ) գործարկումը կատարվում է քննությունների կազմակերպման պատասխանատուի կողմից:

Գրանցամատյանի ձևը սահմանում է քննական հանձնաժողովը:

2.3 Թեկնածուների նույնականացման տվյալների մուտքագրումը Համակարգ (անուն, ազգանուն, անձնագրի (նույնականացման քարտի) սերիան, անձի սեռը և որակավորման տեսակը), սահմանված կարգով քննասենյակ մուտքի ապահովումը, տեխնիկական պայմանների վերաբերյալ բացատրությունների տրամադրումը, թեկնածուների կցումը ներքին ցանցի համակարգիչներին և ըստ թեկնածուների՝ թեստերի էկրան բերումը կատարվում է քննությունների կազմակերպման պատասխանատուի կողմից:

2.4 Համակարգի գործարկման համար թեստ վարողը գաղտնաբառի և օգտանունի միջոցով մուտք է գործում Համակարգ, այնուհետև գաղտնաբառի և օգտանունի միջոցով գործարկվում է ծրագիրը:

2.5 Համակարգիչների և համակարգի գործարկման գաղտնաբառերը փակ ծրարներով պահվում են Միության չհրկիզվող պահարանում: Անհրաժեշտության դեպքում ծրարները կարող են բացվել Հանձնաժողովի նախագահի թույլտվության դեպքում: Գաղտնաբառերն այլ անձանց հայտնի դառնալու դեպքում գաղտնաբառերը փոխվում են:

2.6 Թեկնածուների թեստերի հարցերի պատասխանների արդյունքները (ելնելով համակարգչային տվյալներից) հաստատում է Հանձնաժողովը: Հարցերի պատասխանների արդյունքները հաստատվում է հանձնաժողովի առնվազն երկու անդամների, այնուհետև հանձնաժողովի նախագահի կողմից (արդյունքները կարող են հաստատվել նաև ներքին փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով), որը հանդիսանում է հանձնաժողովի դրական եզրակացությունը և հիմք է դրական արդյունք ապահոված մասնակիցներին որակավորման հավաստագրերի տրամադրման համար:

3.Քննական հարցաշարերում փոփոխությունների և լրացումների կատարումը և համակարգի պահուստավորումը

3.1 Քննական հարցաշարերում փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև համակարգի պահուստավորումը իրականացվում է համաձայն Հայաստանի բանկերի միության և ՀՀ Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրի:

4. Քննությունների արդյունքների բողոքարկումը

4.1 Թեկնածուն կարող է բողոքարկել անցկացված որակավորման քննության արդյունքները՝ հստակ նկարագրելով, իր կարծիքով, առանձին հարց(եր)ի հետ կապված առկա անճշտությունները՝ քննության անցկացման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով Միություն կամ ՀՀ ԿԲ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի, կամ դիմումն էլեկտրոնային եղանակով ներկայացնելով Միություն՝ վերջինիս ինտերնետային կայքի համապատասխան էջում տեղադրված դիմումի ձևանմուշին համապատասխան: Դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Միությունը տեղեկացնում է բողոքարկողին բողոքարկման արդյունքների վերաբերյալ:

4.2 Դիմումը ստանալուց հետո Միության կողմից Հանձնաժողովի նախագահի անունից գրություն է ներկայացվում ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն՝ կից ներկայացնելով նաև բողոքարկողի ներկայացրած դիմում-բողոքը՝ վերջինիս վերաբերյալ ՀՀ ԿԲ-ի դիրքորոշումը ստանալու և բողոքարկողին տրամադրելու նպատակով:

4.3 Դիմում-բողոքի քննության վերաբերյալ ՀՀ ԿԲ-ի կողմից Միությանն է ներկայացվում համապատասխան արձանագրություն՝ բարձրացված խնդրի վերաբերյալ ՀՀ ԿԲ-ի դիրքորոշմամբ՝ բողոքարկողին տրամադրելու նպատակով:

4.4 Թեկնածուների կողմից դիմում-բողոքների ներկայացումը և պատասխանների տրամադրումը իրականացվում է Կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում:

5. Պատասխանատվությունը

5.1 Սույն ընթացակարգի խախտումներ թույլ տված անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: